The only Advertising Agency for Persia and the Caucasus.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 12

ՅԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | |
|---|---|
| Թաւրիզում . . . . . . | 20 ղրան |
| Գաւառներում . . . . . | 25 ղրան |

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

| | |
|---|---|
| Ռուսաստան . . . . . | 4 րբ. 50 կ. |
| Թուրքիա . . . . . . | 50 ղրուշ |
| Եւրոպա . . . . . . | 12 ֆրանկ |
| Ամերիկա . . . . . . | 2 տոլլար |

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 20 շահի
Չորրորդ „ „ 10 „
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 8 ՇԱՀԻ

Խմբագրութեան հասցեն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal arménien ,,MITK"
= Adresse télégrafique-Tauris ,,MITK" =

# ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ادارهٔ روزنامهٔ میطق

Anzeigeblatt fuer Persien

MITK

Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian
Le Gérant
Mihran Baghdassarian

TERMS OF SUBSCRIPITON
for a year payable in advance.
20 krans=2.00 Dollars

RATES OF ADVERTISEMENTS:
one printing line on the 1-st page 10 cen.
,, ,, ,, ,, ,, 4-th ,, 5 ,,
15% discount for annual subscription paid in advance. Address
The ,,MITK" Publication Co.
Tabriz, Persia

Published by the ,,MITK" Publication Co. and Advertising Agency, Tabriz, Persia

Բ. ՏԱՐԻ № 12 ԹԱՒՐԻԶ, ՇԱԲԱԹ 2 ՆՈՅԵՄԲԵՐ 1913 Թ. Tauris, Samedi le 15 Novembre 1913 № 12 Vol. II

Ուզում էք անուշահոտ և հաճելի ծխախոտներ՝
ծխեցէք միայն

Եղբարք ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐԻ սեփական գործարանի ծխախոտները։

Եղբարք ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐԻ ծխախոտի Թաւրիզի բաժանմունքում ծախւում են

ԵԳԻՊՏԵՏՍԿԻ, ԻՐԻՍ, ՓԱՐՈՍ, ՊՐԻՄԱ, ԱՐԻՕԼ և ՄԱՐՍ

պապիրոսները, ընտիր, աժան և վեր ամեն տեսակ մրցումից։
Ծխեցէք, փորձեցէք և չէք փոխի այլ ևս ժողովրդականացած և ընդարձակ գործածութիւն վայելող մեր պապիրոսները։

## ԱԶԴ

Պրօխորով Մանուֆակտուրական ընկերութեան Թաւրիզի բաժանմունքը սորանով յայտնում է ի գիտութիւն տեղիս յարգելի հասարակութեան, որ ընկերութեան տեղիս բաժանմունքում ծախւում են կտորով՝ կանխիկ վճարով ամեն տեսակի մանուֆակտուրական ապրանքներ, մատչելի արժէքով։

Գրասենեակը բաց է, բացի ուրբաթ և կիւրակի օրերից, ամեն օր առաւօտեան ժամը 9-ից մինչև երեկ ժամը 4-ը։

# AVIS

Voulez-vous apprendre la langue et la literature persane dans peu de temps, tachez d'engager Mr. le professeur Edib-ul-khakan, qui après avoir servi 14 ans dans les écoles de Téhéran, est arrivé ici et possède les meilleurs attestations pour sa capacité. Il donne des leçon d'après les dernières méthodes d'enseignement européen.

S'adresser à la Rédaction du journal ,,Le Mitk", Quartier Kala.

## ԱԶԴ

**ՈՒՍՑՈՒՄՆ ՊԱՐՍԿԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ**

Յաջողուել է ձեռնարկել պրօֆ. Էդիպխական, որ 14 տարի Թէհրանի Հայոց և այլ դպրոցներում մեծ յաջողութեամբ ուսուցել է եղել և արժանացել է ամենափայլուն վկայականների ի մասին իւր հմտութեան։ Նա ստանձնում է այլ առարկաները համաձայն նորագոյն գիտութեան Եւրոպական մեթօդների լեզուաբանութեան։

Դիմել «ՄԻՏՔ»-ի խմբագրութեան

## ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ

Ընդ աստեղօք զինչ կայ սիրուն,
Քան զանձկալին եղբայր անուն…

Այս սրտաբուխ և հոգեբուղխ տողերը երգել է ամենաքանքարաւոր բանաստեղծ Տաճկահայ Պէշիկթաշլեանը, երբ կաթոլիկացած և խորթացած հայերը զգալով մայր հատուածից բաժանուելու անտեղութիւնը և վնասակարութիւնը, միութեան ձեռք էին կարկառում իրենց եղբայրներին։

Ի՜նչ գեղեցիկ օրհնութիւն… Եւ, իրօք, չէ՞ որ մենք եղբայրներ ենք. ուրեմն ինչու զատուած պիտի մնանք։

Ինչու մեր հայազգիները պիտի ուղղուին Հռոմ ու Ամերիկա, փոխանակ ուղղուելու դէպի Արարատ և Էջմիածին։

—Ի հոն տեղ ծնան մեր հարքն առաջին – երգել է հայոց պաշտելի Նահապետը – Ալիշանը – ուրեմն և մեր սիրտը մեր հարանց տեղի և նոցա որդոց հետ կապուած պիտի լինի։

Այդ տարրական ճշմարտութիւնը զգացել են այժմ և Պօլսոյ հայ աւետարանականները, որոնք, կիսադարեան ուծացումից և բաժանումից յետոյ, եղբայրական սիրոյ ցոյցեր են անում մեր Տաճկահայ եղբայրներին։

Զարթել է և նոցա մէջ ազգային գիտակցութիւնն ու ոգին։ Եւ նոքա մըշակում են միացման ծրագիրներ հայ մայր հատուածի հետ։

—Եղբայր ենք մենք, որ մերկաւ էինք զատուած – երգել է Պէշիկթաշլեանը։

Այդ մրրիկները անցել են։ Այժմ ոչ մի համոզմունքի խտրականութիւն մեզ չպէտք է բաժանէ իրարից։ Հայ ենք ազգով, ուրեմն մէկ լինինք և գործով։

Յուսանք, ուրեմն, որ շուտով կողջունենք այն օրը, երբ մէջտեղից վերցուած կլինեն բոլոր խտրներն ու պատուարները և մայր հատուածից բաժանուած բոլոր հայերը կգան և կողջագուրեն իրենց եղբայրներին և կկազմեն նախկին միաձոյլ, անանջատ հայութիւնը, կենտրոն ունենալով հայութեան սիրտ Էջմիածինը։

«Աւետաբեր» № 44-ի «Բայլ մը դէպի միութիւն» յօդուածը շատ մխիթարական տպաւորութիւն թողեց մեզ վրայ։ Մենք յուսով ենք մեր աւետարանական եղբայրները դեռ էլ շատ բան կսրբագրեն իրենց առաջնորդ-պարմաններ-

րի մէջ և միութիւնը կդարձնեն աւելի շօշափելի և աւելի իրական։

Սակայն և եղած քայլը և պատուելի Նմաւեանի մտածուած հրաւէրը բաւ ամենայնի ողջունելի են։ Եւ. երանի, դա մի դաս ու խրատ լինէր բոլոր երբանց, որոնք նոյնպէս իրենց մէջ «աւետարանականներ» են կարծում և պոկ չեն գալիս սանձակերի փէշերից.

Սրտի անկուն բերկրութեամբ ենք տպում պատուելի Նմաւեանի դրուածքից հետեւեալ կտորը.

> Նոյնքան հայ ենք մենք, որքան անոնք, աւելի մօտ Թերևս, կրօնքով և գաւառներով Լուսաւորչի և Ներսէսի, Սահակի և Մեսրոպի, նոյն Նախահայր սերքերուն հարազատ զաւակները, նոյն արեան լծէն անցած, նոյն հալածումն ընկեր, նոյն յայրն անկեալ։

Սրտաբուխ այս խօսքերը մի փոխաւոր ապացոյց են տեղիս մեր պատուելի «բողոքականների», որոնք շատ բան ունին սովորելու Պօլսոյ իրենց անդամների եղբայրներից և նոցա օրգան «Աւետաբերից»։

Ողջունում ենք բաժանուած հայերի մերձեցման-միութեան այս խմաստուն քայլը։

Ա. Տ. Վ.

## ՏԱՆՔ ԵՒ ԱՊԱ ՊԱՀԱՆՋԵՆՔ

Սոյն Հոկտեմբեր 13-ին, ամենայն Հայոց կաթողիկոսի հրաւիրանօք, դպրոցական ֆոնդի առթիւ, խորհրդակցութեան են հրաւիրուել Վեհարանի՝ հայրապետի մօտ մի քանի անձինք, ուր կարծիքների փոխանակութեան է ենթարկուել այն խնդիրը, թէ արդեօք ինչ բնաւորութիւն պէտք է տալ դպրոցական ֆոնդին, այսինքն հայութեան բոլոր հատուածները պէտք է օգտուեն այդ ֆոնդից՝ թէ միայն առուահայերը։

Նորագ հանգուցեալ Քալանթարը ու պ. Հ. Առաքելեանը պնդել են այն կարծիքի վրայ, որ ֆոնդին անպայման պէտք է ընդհանուր համազգային բնաւորութիւն տալ, որով նաև տաճկահայերն ու պարսկահայերը աւելի սերտ կերպով կապուած կլինեն Էջմիածնի հետ և երկրորդ հայութեան բոլոր հատուածները իրենց կամաւոր լուման կընծայաբերեն ու այդպիսով կգոյանայ մի պատկառելի գումար։ Դեռ յայտնի չէ թէ Էջմիածինը ինչ կարծիք ունի խնդրի այս կամ այլ ձեւի կապ-

տրպատականի ժողովակայան գիւղերի ուսումնարաններից կամ գրադարան-ընթերցարաններից մէկին եթէ կայ¹)

Ընդունեցէ՛ք յարգելի խմբագրապետ, այս առթիւ անկեղծ համակրութեանս արտայայտութիւնը՝

Յարգանօք
Ձեր մի Եակին բաժանորդ
№ №

¹) Այդ մի օրինակը կուղարկուի Մարաղա «Ա. Երիցեան» գրադարան ընթերցարանին: Ս. Խ.

## ԼՈՒՐԵՐ

### ԹԱՒՐԻԶ

Դեկտեմբեր

29-ին Լիլաւէ եկեղեցում և դպրոցում ընկերների և համակրողների կողմից կազմուած էր հոգեհանգիստ և ողբացողներ Ս. Զաւարեանի: Ներկայ էր Թեմիս առաջնորդը, որ գովասանքով խօսեց հանգուցեալի մասին։

❖ Նոյն օրը Ղալայի մայր եկեղեցում կարդացուեց Վեհի կոնդակը, որով կենտրոնականը յայտարարւում էր զուտ հոգևոր դպրոց, կից օրիօրդաց բաժանմունքով։ Այս մասին կխօսենք իր տեղում

❖ 27-ին մի երկրորդ անգամ թատրոն ներկայացուեց Գուլբենկեանի ... վաճառումը հովանաւորել էր Տէր. Նաշ. Նօզա-էդ-Դովլէն։

❖ 30-ին Թեմիս գերապատիւ առաջնորդ Տ. Ներսէս վարդապետ Մելիք Թանգեանը այցելեց Արամեան դպրոցը և ներկայ եղաւ Տ. դասատուի Ռուս. լեզուի, Ա. դասատուի Թուար. Գ. բաժ. հայ լեզուի դասերին։

31-ին այս տարի առաջին անգամ ձիւն եկաւ ամբողջ օրը։

❖ Եղբայրք Բուդաղեանները ծախում են Սուլդուզի ցորեն, շուկայի արժէքից աւելի մատչելի գնով։

Եղբայրք Բուդաղեանները հաղորդակցութեան դիւրութեան համար շինել են նոր նաւահանգիստ Սուլդուզի՝ Ուրմիայ ծովափին։

## ՊՈՍՏԱՐԿՂ

Մեր բոլոր բաժանորդներին.—խնդրում ենք փութով մեզ հասցնել ձեր տարեկան բաժանորդագները: Ուր չկան գործակալներ, հենց պ. պ. բաժանորդներն իրենք ուղղակի կարող են դրամը մեզ ղրկել:

### ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Մարաղա—Միսակ խան Աֆթանդիլեան
Ուրմի—Արիստակէս Միրզաջանեանց
Արդաբիլ—Յովհ. Մհտ. Պետրոսեան
Թեհրան—Ռաֆայել Մովսիսեան
Էնզելի—Բալասան Մկրտչեան
Սալմաստ—Ներսէս Դաւթեան
Ռեշտ—Իսրայէլ Յարութիւնեան
Աստարա—Ա. Բեկեան
Պոլիս—Խմբագրութիւն «Կայծ» և «Կոհակ»
Ամերիկա—Խմբ. «Երիտ. Հայաստան»

### ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հանդէս Ամսօրեայ № 10, Վիեննա
2. Ուսուցիչ № 44, Պոլիս
3. Աղգագրակ. Հանդէս գիրք 24-րդ. Թիֆլիս
4. Կայծ № 3 (1913) Պոլիս

Խմբագիր-Հրատարակիչ՝
Ալ. Տէր-Վարդանեան
Տնօրէն՝ Միհրան Բաղդասարեան

„ԶԻՆԳԵՐ“
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄՇՏԱՊԷՍ ՅՈՒՑԱԿ ՓԻՐՄԱՅԻ ԴՐՕՇՄ

„ԶԻՆԳԵՐ“ ընկերութեան խանութներում ստացուել են ամեն տեսակ կարեմեքենաներ։ Ստացուել է 1913 թուի կատարելագործուած մի մեքենայ 66-րդ կլաս կոչմամբ յայտնի, որը իր մեխանիզմով ամենայայտնի զարծածելի մեքենան է։ Ծախւում են ինչպէս կանխիկ, նոյնպէս և ամսավճարով, շաբաթական ՀԻՆԳ ղրան վճարումով ի դիւրութիւն գնողների։

„ԶԻՆԳԵՐԻ“ խանութում ծախւում են ընկերութեան յատուկ կոճի թելերը. ամեն մի կոճը բաղկացած է 250 արշին թելից, հատը 6 շահի, տասնյակը 2 ղրան 75 կոպէկ։

*Требуйте*

Турецкіе Табакъ и Папиросы

**Л. Биніатъ Оглы въ Батумъ**

**Адресъ:** *Тавризъ каравансарай Гаджи Сеидъ Гусейнъ кадимъ*

*Demandez*

Du tabac et des cigarettes Turc

**L. Biniatoglou à Batoum**

**Adresse:** *Tauris, Caravansaray Hadji Seid Houssein kadim*

**ՊԱՀԱՆՋԵՑԷՔ**

Թանկական ծխախոտ և պապիրոսներ

**Լ. ԲԻՆԵԱԹ ՕՂԼՈՒ**

**ՀԱՍՑԷՆ՝** Թաւրիզ, Հաջի Սէիդ Հիւսէյնի Նախկին Քարվանսարայում

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## لاطاری برای ۱۰ ملیون فرانك

این لاطار بزرك از طرف دولت دانمارك مقرر فرموده هر ماه در شهر کوپنهاکن کشیده میشود . عدد بلیطها ۵۰۰۰۰ است کهاز آنها ۲۱۵۵۰ مبالغ مختلفه بکیرند قیمت بلیطها ازیك تومان تا ۸ تومان ماهانهاست ومبلغ کهاز ۱۰۰ تا ۱۰۰۰۰۰ فرانك هستند ازطرف بانك دولتی در کوپنهاکن بدون تنزیل اعتاوتأدیه خواهد شد هر کس میتواند بدون رنج وزحمت صاحب ثروت کل بشود . امتحان بخت برای هر کس لازماست . دفاتر خرید بلیطهای مزبور برای ۱۹۱۴ میلادی دراداره روزنامهٔ «میطك» ازطرف وکیل بانك دولتی مهران افندی باغداسیریانس حاضراست وبس از کشیده شدن لاطار بموجب روزنامه نمرهٔ اسهام معین ونمرهٔ بلیطهائی که چیزی میبرند در روزنامهٔ «میطك» نشر و اعلان خواهد شد . هر کس طالب باشد باداره روزنامهٔ «میطك» رجوع نماید .

مهران باغداسریانس
( وکیل بانك لاطار کولونیال دولت دانمارك )

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Յայտնում ենք յարգելի հասարակութեան, որ Դանիմարկայի Գոլոնիալ Լօտերիայի 15-րդ շրջանի տոմսակներն արդէն ստացուած են և վաճառւում են ամսական 1, 2, 4, 8 թուման վճարով.

№ 1 կլասը քաշուելու է 1914 թ. Յունվար 15-ին։

Դիմել Միհրան Բաղդասարեանին

## Объявленіе

Прибылъ въ городъ и приступилъ къ преподаванію персидскаго языка професоръ Эдибхаканъ, бывшіи въ тегеранскихъ Армянскихъ учебныхъ заведеніяхъ въ теченіи 14 и лѣтъ преподавателемъ. Объ окончаніи учебнаго курса имѣетъ нѣсколько свидѣтельствъ. Преподаваніе ведетъ по усовершествованнымъ Европейскимъ методамъ послѣдняго слова дидактики.
Со справками въ редакцію ,,Митkъ".

## ANZEIGE

Zur Erlernung der persishen Sprache und Literatur wende man sich an die Redaktion des Anzeigeblattes ,,Mitk", Kala. Der Lehrer ist einer der besten Professoren in Persien, welcher 14 Jahre lang in Teheran als Sprachlehrer taetig gewesen ist und die besten Zeugnisse fuer seine Faehigkeit besitzt. Er lehrt nach den neuesten Europaeischen Methoden der Sprachwissentschaft.

## *Do you want to study Persian language & literature?*

Prof. Edib-ul-Khakan, one of the best teachers of Teheran, who has 14 years of experience teaching Persian language and literature, is ready to give private lessons according to latest and best methods of teaching in Europe. He has the very best testimonials for his carachter and ability.

For further information apply to the manager of the ,,Mitk" Publ. Co. Kala.